«ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՆԱԿ-ՄԱԱՊՁԲ-08/21

ք. Երևան «17» փետրվարի 2021թ.

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս գլխավոր տնօրեն Լ. Օհանեսյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ գնորդ), մի կողմից, «Վահրամ Հովհաննիսյան Գարիկի»Ա/Ձ-ն, ի տնօրեն՝ Վ.Հովհաննիսյանի , ով գործում է օրենսդրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 559970 (Հինգ հարյուր հիսունինը հազար ինը հարյուր յոթանասուն ՀՀ դրամ)

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[19] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի

մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
Ներդրումների աջակցման կենտրոն»	«Վահրամ Հովհաննիսյան Գարիկի»
հիմնադրամ	Ա/Ձ՝
Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	ք .Երևան հերացի 10/1
«Կոնվերսբանկ» ՓԲԸ	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300597578701 00	Հ/Հ19300997087500
ՀՎՀՀ 02562459	ՀՎՀՀ 30960355
Գլխավոր տնօրեն՝ Է. Օհանեսյան	տնօրեն՝ Վ. Հովհաննիսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 17» 02. 2021 թ. կնքված
ՆԱԿ-ՄԱԱՊՁԲ-08/21 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի											
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը
1	18421130	ձեռնոցներ	Խինդայի, Չինաստան	*Տնտեսական ձեռնոցներ, ռետինե, ամուր, միջին չափի (M):*	զույգ	180	2700	15	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	15	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ
2	19641000	պոլիէթիլենային պարկ, աղբի համար	Բոնուս, ՌԴ	*Աղբի պոլիէթիլենային տոպրակներ, սև կամ գունավոր, աղբը հավաքելու համար՝ ըստ ԳՕՍՏ 10354-82 կամ համարժեքԱղբի տոպրակներ , 120 լ :*	հատ	700	24500	35	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	35	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ
3	19641000	պոլիէթիլենային պարկ, աղբի համար	Բոնուս, ՌԴ	*Աղբի պոլիէթիլենային տոպրակներ, սև կամ գունավոր, աղբը հավաքելու համար՝ ըստ ԳՕՍՏ 10354-82 կամ*	հատ	360	10800	30	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	30	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ

				համարժեքԱղբի տոպրակներ, 60 լ տարողությամբ,							
4	19641000	պոլիէթիլենային պարկ, աղբի համար	Բոնուս, ՌԴ	Աղբի պոլիէթիլենային տոպրակներ, սև կամ գունավոր, աղբը հավաքելու համար՝ ըստ ԳՕՍՏ 10354-82 կամ համարժեքԱղբի տոպրակներ, 30 լ տարողությամբ,	հատ	280	8400	30	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	30	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ
5	24311116	Ջրածնի քլորիդ	Սաֆո, ՀՀ	ժավել 5լ տարաներով	կգ	184	11040	60	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	60	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ
6	33761000	զուգարանի թուղթ ռուլոնով	Սենտեքս,Իտալիա	Երկշերտ կամ եռաշերտ, 9,8սմX12,5սմ, 150 թերթիկ, երկ. 18,75մ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թույլատրված սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ	հատ	800	64000	80	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	80	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ

				հաստատված «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների							
7	33761300	ձեռքի թղթե սրբիչներ զուգար	Սենտեքս,Իտալիա	Երկշերտ կամ եռաշերտ, 9,8սմX12,5սմ, 150 թերթիկ, երկ. 18,75մ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թույլատրված սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:	հատ	600	180000	300	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	300	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ
8	33761600	ամանի սրբիչ	Սրբիչ Հայաստան	Վաֆլենման կամ խավոտ սրբիչներ, եգիպտական բամբակյա մանվածքից՝ 70 սմ-ից ոչ պակաս	հատ	700	8400	12	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	12	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև

				լայնությամբ, 130 սմ երկարությամբ GOUS 11027-80							01.04.2021թ
9	39221490	սպունգներ	Վիլեդա ,Գերմանիա	*Ուղղանկյունաձև, երկարությունը 120 մմ, լայնությունը 70մմ, հաստությունը 25մմ, մի կողմից երեսապատված արհեստական կտորով*	հատ	270	3240	12	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	12	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ
10	39221410	ավելներ	Յոռկ,Թուրքիա	*Ավել 80 սմ .խիտ բարձր որակի*	հատ	1100	2200	2	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	2	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ
11	39221410	ավելներ	Յոռկ,Թուրքիա	*Խոզանակ տնտեսական և գոգաթիակ բռնակով:, 75 սմ:*	հատ	1900	5700	3	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	3	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ
12	39221480	տուալետի խոզանա	Յոռկ,Թուրքիա	*տուալետի խոզանակի կոմպլեկտ:*	հատ	1400	12600	9	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	9	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ
13	39513200	թղթե անձեռոցիկ , երկշերտ	Սելպակ, Թուրքիա	*Անձեռոցիկ 100 հատ, 3 շերտ, ուղղանկյուն տուփի մեջ, չափը՝ 22.5 x 6 x 11.5 Անվտանգությունը,*	հատ	850	25500	30	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	30	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև

				մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:							01.04.2021թ
14	39513200	թղթե անձեռոցիկ, երկշերտ	Պապիռուս, Հայաստան	*Անձեռոցիկ 100 հատ, երկշերտ, ուղղանկյուն տուփի մեջ, չափսը՝ 15 x 4.7 x 11 սմԱնվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:*	հատ	140	16800	120	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	120	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ
15	39522330	մաքրող կտորներ	Միկրոֆիբռա,Չինաստան	*Կտոր միկրոֆիբրաից, չափը 30 սմ* 30 սմ:*	հատ	400	6000	15	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	15	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև

											01.04.2021թ
16	39522330	մաքրող կտորներ	Միկրոֆիբ ռա,Չինաս տան	*Հիգիենիկ կտոր սպունգային հատկություններով Չափերը 39 սմ* 36 սմ:*	հատ	230	11040	48	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	48	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ
17	39531800	գորգեր	գորգեր, Չինաստա ն	*Կարպետ մուտքի դռան համար*	հատ	1500	1500	1	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	1	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ
18	39831276	Զուգարան ի մաքրող միջոց	Սաֆո,Հայ աստան	*Զուգարանակոնքի մաքրման միջոց, հեռացնում է ժանգը և նստվածքը, հանդիսանում է մանրեասպան, 1 լ*	լիտր	520	5200	10	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	10	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ
19	39812410	կահույքի փայլեցման միջո	Պոռնտո,Գե րմանիա	*Լաք կահույքի համար, (հակափոշի) 250 մլ:*	լիտր	1500	4500	3	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	3	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ

20	39831283	հատակի լվացման լաթ	հատակի լվացման լաթ,Չինաստան	*Հատակի մաքրման շվաբրի գլխիկ, սրբիչատիպ թելիկներով*	հատ	1150	6900	6	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	6	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ
21	39831283	հատակի լվացման լաթ	հատակի լվացման լաթ,Չինաստան	*Հատակի մաքրման շվաբրի գլխիկ , շրջանակաձև թելե*	հատ	1000	4000	4	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	4	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ
22	39831282	կահույք մաքրելու լաթ	Միկրոֆիբռա, Չինաստան	*Անձեռոցիկներ միկրոֆիբրայից 40 * 40 սմ:*	հատ	450	6750	15	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	15	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ
23	39831210	սպասքի լվացման հեղուկ	Ֆերի,ՌԴ	*Սպասք լվանալու հեղուկ, 900 մլ խիտ բարձր որակի*	հատ	1200	18000	15	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	15	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ
24	39831245	օճառ, հեղուկ ձեռքի	Նաշ սադ.Հայաստան	*Հեղուկ օճառ, 5 լ տարաներով*	լիտր	640	32000	50	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	50	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ
25	39831247	ախտահանող հեղուկ՝ սանհանգույցի համար (կոռտ)	Սաֆո,Հայաստան	*Կոյուղիների մաքրման հեղուկ, (կոռտ) 1 լ տարրաներով*	կգ	483.3	5800	12	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	12	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ

26	39811100	հոտազերծիչ օդի	Բոեֆ, Լեհաստան	Փակ սենյակի հոտի թարմացման համար, վակուումային բալոնիկով, թարմ ծաղկային բուրմունքով	հատ	850	34000	40	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	40	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ
27	39831280	ապակի մաքրելու միջոց	Սաֆոն,Հայաստան	*Մաքրող միջոց դժվար հեռացվող ախտոտվածությունների դեմ, քրոմեացված մակերևույթների համար , փոշեցրիչով, 750մլ:*	լիտր	450	5400	12	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	12	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ
28	39831273	հատակ լվանալու հեղուկ	Լյուդվիկ, Լեհաստան	*Ունիվերսալ մաքրող հեղուկ, հատակ լվանալու համար*	լիտր	1000	5000	5	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	5	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ
29	39831281	ապակի մաքրման լաթ	Միկրոֆիբրա,Չինաստան	*Կտորե անձեռոցիկ միկրոֆիբրայից, ապակու, հայելիների համար, 40*30 սմ:*	հատ	450	4500	10	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	10	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ
30	39831283	հատակի լվացման լաթ	Միկրոֆիբրա,Չինաստան	*Կտոր միկրոֆիբրա հատակի: Չափը 70 * 80 սմ:*	հատ	1000	10000	10	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	10	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ

31	39831274	Էկրան մաքրող հեղուկ	Սանո, իզրաել	Մոնիտորների և հեռուստացույցների LCD էկրաններ մաքրելու համար Ներառված է միկրոֆիբրայի կտոր (18 x 18 սմ)Մաքրող հեղուկ Պարունակությունը ջուր, ոչ իոնային մակերևութային ակտիվներ ՝5% -ից պակաս, n-պրոպանոլ, կոնսերվանտ, հակաստատիկ բաղադրիչ քաշը 200 մլ	հատ	2350	23500	10	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	10	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.04.2021թ

ԳՆՈՐԴ

Ներդրումների աջակցման կենտրոն»
հիմնադրամ
Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300597578701 00
ՀՎՀՀ 02562459
Գլխավոր տնօրեն Ը.Օհանեսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Վահրամ Հովհաննիսյան Գարիկի»
Ա/Ձ՝
ք .Երևան հերացի 10/1
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ19300997087500
ՀՎՀՀ 30960355
տնօրեն՝ Վ.Հովհաննիսյան

/ստորագրություն/

Հավելված N 2
« 17 » 02. 2021 թ. կնքված
ՆԱԿ-ՄԱԱՊՁԲ-08/21 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**			
			փետրվար	մարտ	ապրիլ	Ընդամենը
1	18421130	ձեռնոցներ	2700	2700	2700	**2700**
2	19641000	պոլիէթիլենային պարկ, աղբի համար	24500	24500	24500	**24500**
3	19641000	պոլիէթիլենային պարկ, աղբի համար	10800	10800	10800	**10800**
4	19641000	պոլիէթիլենային պարկ, աղբի համար	8400	8400	8400	**8400**

5	24311116	Ջրածնի քլորիդ	11040	11040	11040	**11040**
6	33761000	զուգարանի թուղթ ռուլոնով	64000	64000	64000	**64000**
7	33761300	ձեռքի թղթե սրբիչներ զուգար	180000	180000	180000	**180000**
8	33761600	ամանի սրբիչ	8400	8400	8400	**8400**
9	39221490	սպունգներ	3240	3240	3240	**3240**
10	39221410	ավելներ	2200	2200	2200	**2200**
11	39221410	ավելներ	5700	5700	5700	**5700**
12	39221480	տուալետի խոզանա	12600	12600	12600	**12600**

13	39513200	թղթե անձեռոցիկ, երկշերտ	25500	25500	25500	**25500**
14	39513200	թղթե անձեռոցիկ, երկշերտ	16800	16800	16800	**16800**
15	39522330	մաքրող կտորներ	6000	6000	6000	**6000**
16	39522330	մաքրող կտորներ	11040	11040	11040	**11040**
17	39531800	գորգեր	1500	1500	1500	**1500**
18	39831276	Զուգարանի մաքրող միջոց	5200	5200	5200	**5200**
19	39812410	կահույքի փայլեցման միջոց	4500	4500	4500	**4500**
20	39831283	հատակի լվացման լաթ	6900	6900	6900	**6900**

21	39831283	հատակի լվացման լաթ	4000	4000	4000	**4000**
22	39831282	կահույք մաքրելու լաթ	6750	6750	6750	**6750**
23	39831210	սպասքի լվացման հեղուկ	18000	18000	18000	**18000**
24	39831245	օճառ, հեղուկ ձեռքի	32000	32000	32000	**32000**
25	39831247	ախտահանող հեղուկ՝ սանհանգույցի համար (կոռտ)	5800	5800	5800	**5800**
26	39811100	հոտազերծիչ օդի	34000	34000	34000	**34000**
27	39831280	ապակի մաքրելու միջոց	5400	5400	5400	**5400**
28	39831273	հատակ լվանալու հեղուկ	5000	5000	5000	**5000**

29	39831281	ապակի մաքրման լաթ	4500	4500	4500	**4500**
30	39831283	հատակի լվացման լաթ	10000	10000	10000	**10000**
31	39831274	էկրան մաքրող հեղուկ	23500	23500	23500	**23500**

ԳՆՈՐԴ

Ներդրումների աջակցման կենտրոն»
հիմնադրամ
Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300597578700100
ՀՎՀՀ 02562459
Գլխավոր տնօրեն՝ Լ.Օհանեսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Վահրամ Հովհաննիսյան Գարիկի»
Ա/Ձ՝
ք .Երևան հերացի 10/1
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ19300997087500
ՀՎՀՀ 30960355
տնօրեն՝ Վահրամ Հովհաննիսյան

/ստորագրություն/

Հավելված N 3
« 17 » 02. 2021 թ. կնքված
ՆԱԿ-ՄԱԱՊՁԲ-08/21 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 17 » 02. 2021 թ. կնքված
ՆԱԿ-ՄԱԱՊՁԲ-08/21 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն